



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2019 թվականի թիվ 129-Ս  
ք. Երևան

#### ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՑԱՆՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԻ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 47-րդ հոդվածի 7-րդ մասի, 61-րդ հոդվածի 7-րդ մասի և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 28-ի «Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստաընկերությունների մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 25-ին հայտարարել թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման, ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող հեռուստաձրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթ, սփռման տարածքը՝ ՀՀ Տավուշի մարզ:

2. Հաստատել և հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով մրցույթի մասին տեղեկատվությունը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**Թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման, ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող հեռուստածրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթի մասին**

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրի եթերային հեռարձակում:
2. Հեռուստածրագրի թեմատիկ ուղղվածությունը՝ ընդհանուր ուղղվածության:
3. Սփռման տարածքը՝ ՀՀ Տավուշի մարզ:
4. Լիցենզիայի գործողության ժամկետը՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն լիցենզիայի գործողության ժամկետ է սահմանվում այն ամսաթիվը, որը նշված է ուժը կորցրած ճանաչված լիցենզիայում՝ մինչև 2021 թվականի հունվարի 20-ը:
5. Մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակացույցը.
  - 1) Հայտերն ընդունվում են 2020 թվականի փետրվարի 17-ից մինչև 2020 թվականի փետրվարի 27-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ն: Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:
  - 2) 2020 թվականի փետրվարի 27-ին Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում մրցույթի մասնակիցների ցանկի հրապարակում:
  - 3) 2020 թվականի մարտի 3-ից սկսած Հանձնաժողովի դռնբաց նիստում մրցույթի մասնակիցների հայտերի և կից փաստաթղթերի հրապարակում:
  - 4) 2020 թվականի ապրիլի 22-ին լիցենզավորված անձի ընտրություն:
6. Անհրաժեշտ փաստաթղթեր՝
  - 1) ընկերության հիմնադիր փաստաթղթերի և իրավաբանական անձի կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները,
  - 2) հեռուստաընկերության բիզնես ծրագիրը,
  - 3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին,
  - 4) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
  - 5) տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին,
  - 6) լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար 900005164596 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված 200 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակը:
7. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել (010) 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել [licensing@tvradio.am](mailto:licensing@tvradio.am) էլ. փոստի հասցեով:
8. Հայտի ձևը՝

\_\_\_\_\_ին  
(անուն, ազգանուն)

ՀԱՅՏ

Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձայնի եթերային  
հեռարձակման լիցենզավորման մրցույթին մասնակցելու

Հայտատուի անվանումը \_\_\_\_\_

Գտնվելու վայրը \_\_\_\_\_

Հեռախոսահամարը, էլ. հասցեն \_\_\_\_\_

Հեռուստաձայնի թեմատիկ ուղղվածությունը \_\_\_\_\_

Միուման տարածքը \_\_\_\_\_

Տեղեկություններ հայտատուի՝ այլ հեռուստառադիոընկերության հիմնադիր և  
լիցենզավորված անձ կամ զանգվածային լրատվության այլ միջոցների հիմնադիր լինելու,  
ինչպես նաև դրանց արտադրությամբ և տարածմամբ զբաղվելու մասին

Սեփական արտադրության հաղորդումների ծավալը \_\_\_\_\_

Հայրենական արտադրության հաղորդումների ծավալը \_\_\_\_\_

Կից փաստաթղթեր՝ \_\_\_\_\_ թերթ:

Տնօրեն \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

\_\_\_\_\_ (օրը, ամիսը, տարեթիվը)